



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՌԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան

14 մարտի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի  
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոփյանի  
Վ. Պողոսյանի

Ուսումնասիրելով դիմող Արոմ Մելքոնյանի անհապական դիմումով գործը քննության  
ընդունելու մասին հարցը,

**Դ Ա Ր Ձ Յ Յ Տ.**

Արոմ Մելքոնյանը 22.02.2013թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով  
ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթների սահմանադրականությունը:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմը չի կարող համարվել իրավական այն առումով,  
որ վերջինս չի սահմանում այն չափանիշները, որոնցով դատարանը պետք է առաջնորդվի,  
կամ այն հանգամանքները, որոնք դատարանը պետք է հաշվի առնի:

Ըստ դիմողի՝ սահմանելով այդպիսի որոշում կայացնելու լիազորություն և չսահմանելով  
որոշումը կայացնելու չափանիշները, օրենքի վիճարկվող նորմը բացարձակ հայեցողություն  
է դրվել դատարաններին՝ թույլ տալով վերջիններիս կամայական որոշումներ կայացնել:

Դիմողի կարծիքով՝ յուրաքանչյուր դեպքում, երբ որեւէ այլընդունակային որոշման  
կայացումն օրենքով թողնվում է դատարանին, նույն օրենքը միաժամանակ սահմանում է այն  
չափանիշները, որոնցով պետք է առաջնորդվի դատարանն իր հայեցողական լիազորու-  
թյունները կիրառելիս:

Դիմողը նշում է, որ վիճարկվող նորմն իր անորոշության պարզաբունք բացառում է այդ  
մասով պարզաբանված դատական ակտի կայացումը: Մինչդեռ պարզաբանված

դադարական ակդ սպանալու իրավունքը, իր հերթին, առնչվում է Սահմանադրության ինչպես 19-րդ հոդվածի 1-ին մասին, այնպես էլ 20-րդ հոդվածի 3-րդ մասին:

Դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը վիճարկվող այս դրույթի հակասահմանադրականությունը փորձում է հիմնավորել ենթադրյալ օրենսդրական բացը մագնանշելով: ՀՀ սահմանադրական դադարանն իր՝ 2010թ. փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշման մեջ, անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դադարանի եւ օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը, նշել է, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գրնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմադիվ պարզիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դադարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է փվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք: Զարգացնելով իր վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դադարանը 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴՈ-914 որոշմամբ արձանագրել է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դադարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձեւավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Այսինքն՝ իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա է սահմանադրական դադարանի քննությանը, երբ կոնկրետ գործով միաժամանակ առկա են օրենսդրական բացի՝ սահմանադրական դադարանի կողմից մագնանշված վերոնշյալ չափանիշները, այն է՝ կոնկրետ սահմանադրական իրավունքի խախտում կամ այդ խախտման պորենցիալ հնարավորություն եւ օրենսդրության մեջ այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքների բացակայություն կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձեւավորված հակասական իրավակիրառական պրակտիկա:

Դիմումի ընդիանուր գրամաբանությունը վկայում է, որ կոնկրետ փվյալ դեպքում դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքներն ընդամենը նրա նկարմամբ կայացված համապատասխան դադարական ակդերի արդյունք են, այսինքն՝ խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն քողարկել խնդրո առարկա դրույթի

հակասահմանադրականության վիճարկմամբ: Փաստորեն դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթների սահմանադրականությունը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց:

Դեկավարվելով ՀՀ սահմանադրական դադարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ արգահայքած իրավական դիրքորոշմամբ, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, եթե դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դադարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ, դադարական կազմը գտնում է, որ այս համարեքարում առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախագրեսված հիմք:

Ելնելով վերոգրյալից եւ դեկավարվելով «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով եւ 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դադարանի թիվ 2 դադարական կազմը

### ՈՐՈՇԵՅ.

Դիմող Արում Մելքոնյանի անհարական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:



14 մարտի 2013 թվականի  
ՍԴԱՈ/2-10